«ՇԵՆԳԱՎԻԹ» ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

փակ բաժնետիրական ընկերություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ
հաշվեփակված տարվա
ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

Բովանդակություն

- Անկախ աուդիտորի եզրակացություն
- Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
- Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
- Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
- Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
- Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ԱԾ N 1 20 0284
Տրված՝ 18.12.2020 Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների Պալատ
հասարակական կազմակերպության խորհրդի թիվ 11ա որոշմամբ

«Փըրֆեքթ Աուդիտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան 0010
Տիգրան Մեծի 4
Հեռ. +374 10 524 724

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Շենգավիթ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի
ղեկավարությանը

Վերապահումով կարծիք

Մեր կողմից իրականացվել է «Շենգավիթ բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունների աուդիտը, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, բացառությամբ «Վերապահումով կարծիքի հիմք» բաժնում նկարագրված հանգամանքների ազդեցությունների և հնարավոր ազդեցությունների, կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության ֆինանսական վիճակը, նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

Վերապահումով կարծիքի հիմք

1. Հիմնական միջոցների հաշվառման տվյալների անհամապատասխանություն

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության հիմնական միջոցների անալիտիկ և սինթետիկ հաշվառման տվյալների միջև առկա է 293,646 հազար դրամ տարբերություն: Նախորդ ժամանակաշրջանից փոխանցված հիմնական միջոցների չպարզաբանված տարբերությունները նույնպես ամբողջությամբ չեն վերացվել: Մեզ չեն ներկայացվել տարբերությունների ամբողջական վերծանումը և բավարար փաստաթղթային հիմնավորումները: Հետևաբար, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ հիմնական միջոցների սկզբնական արժեքի, կուտակված մաշվածության և հաշվեկշռային արժեքի ճշտության վերաբերյալ, ինչպես նաև որոշել ֆինանսական հաշվետվություններում հնարավոր անհրաժեշտ ճշգրտումները:

2. Փոխառության ծախսումների կապիտալացում

Ընկերությունը շենք-շինությունների շահագործման հանձնումից հետո 2025 թվականին շարունակել է փոխառության ծախսումների կապիտալացումը՝ 90,179 հազար դրամ գումարով: Բացի այդ, հիմնական միջոցների արժեքում շարունակում է ներառված մնալ 2024 թվականին նույն հիմքով

կապիտալացված 98,849 հազար դրամ գումարը: Նման հաշվառումը չի համապատասխանում ՀՀՄՍ 23 «Փոխառության ծախսումներ» ստանդարտի պահանջներին: Արդյունքում 2025 թվականի ֆինանսական ծախսերը թերագնահատված են 90,179 հազար դրամով, իսկ հիմնական միջոցների և սեփական կապիտալի ցուցանիշները գերագնահատված են չճշգրտված կուտակային զուտ ազդեցության չափով՝ հաշվի առնելով մաշվածության և հարկային ազդեցությունները: Ընկերությունը ֆինանսական հաշվետվություններում համապատասխան ճշգրտումներ չի կատարել:

3. Արտարժույթով վարկի վերագնահատում

ԱՄՆ դոլարով արտահայտված վարկի՝ 2025 թվականի հուլիսի 31-ին ամբողջությամբ մարման պահին Ընկերությունը չի իրականացրել պարտավորության վերագնահատում կիրառելի փոխարժեքով: Արդյունքում 77,843 հազար դրամի չափով փոխարժեքային տարբերությունից առաջացած եկամուտը չի ճանաչվել ֆինանսական արդյունքներում: Հետևաբար, 2025 թվականի շահույթը և սեփական կապիտալը թերագնահատված են 77,843 հազար դրամով:

4. ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտի չկիրառում

ՖՀՄՍ 16 «Վարձակալություններ» ստանդարտի համաձայն՝ վարձակալը վարձակալության մեկնարկի ամսաթվին պետք է ճանաչի օգտագործման իրավունքով ակտիվ և վարձակալության պարտավորություն: Վարձակալության պարտավորությունը պետք է սկզբնապես չափվի այդ ամսաթվի դրությամբ չվճարված վարձակալական վճարների ներկա արժեքով, իսկ հետագա ժամանակաշրջաններում՝ ավելացվի տոկոսային ծախսով և նվազեցվի կատարված վճարումներով: Ընկերությունը չի իրականացրել 2025 թվականի վարձակալության պարտավորությունների և օգտագործման իրավունքով ակտիվների ամբողջական վերահաշվարկ՝ ՖՀՄՍ 16-ի պահանջներին համապատասխան: Հետևաբար, մենք չենք կարողացել ձեռք բերել բավարար և համապատասխան աուդիտորական ապացույցներ օգտագործման իրավունքով ակտիվների, կուտակված մաշվածության, վարձակալության պարտավորությունների, տոկոսային և մաշվածության ծախսերի ճշտության վերաբերյալ և որոշել ֆինանսական հաշվետվություններում հնարավոր անհրաժեշտ ճշգրտումների գումարը: Նշված հանգամանքը կարող է էական ազդեցություն ունենալ ներկայացվող ֆինանսական հաշվետվությունների արժանահավատության վրա:

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Սույն ստանդարտներով սահմանված մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր հաշվետվության՝ Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների վարքագծի միջազգային ստանդարտների խորհրդի՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրքի (ՀՎՄՍԽ վարքագիրք), և մենք կատարել ենք վարքագծի հետ կապված մեր այլ պարտականությունները՝ համաձայն նշված պահանջների և ՀՎՄՍԽ վարքագրքի: Մենք գտնում ենք, որ ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար են և համապատասխան՝ մեր վերապահումով կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ) համապատասխան սույն ֆինանսական հաշվետվությունների կազմման, ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համակարգի ապահովման համար, որը ղեկավարությունը համարում է անհրաժեշտ սխալի կամ խարդախության հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու, անհրաժեշտության դեպքում՝ անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ դիտարկված, զերծ են սխալի կամ խարդախության հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել աուդիտորական հաշվետվություն, որը ներառում է մեր կարծիքը:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, ինչը, սակայն, երաշխիք չէ, որ Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումները, եթե այդպիսիք առկա են: Ֆինանսական հաշվետվություններում խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, երբ ողջամտորեն կարելի է ակնկալել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ սույն ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Աուդիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում:

Մենք նաև իրականացնում ենք հետևյալը.

- Բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվություններում առկա էական խեղաթյուրումների ռիսկը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- Դիտարկում ենք աուդիտին առնչվող ներքին վերահսկողության համակարգը՝ նպատակ ունենալով մշակել համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ կարծիք արտահայտել Ընկերության ներքին վերահսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարված հաշվապահական գնահատումների և առնչվող տեղեկատվության բացահայտումների խելամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից գործունեության անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական

անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա պարտավոր ենք աուդիտորական հաշվետվությունում հղում կատարել ֆինանսական հաշվետվություններում ներկայացված համապատասխան բացահայտումներին, կամ, երբ այդ բացահայտումները՝ համապատասխան չեն, ձևափոխել մեր աուդիտորական եզրակացությունը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այսուհանդերձ, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Ընկերության գործունեության անընդհատության դադարեցմանը:

- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, տեղեկացնում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող էական թերությունների մասին:

29 հունիս, 2026թ.

Տնօրեն-բաժնետեր, տ.գ.թ. / Առաջադրանքի ղեկավար
Աղավնի Բաբայան

ՇԱՀՈՒՅԹԻ ԿԱՄ ՎՆԱՍԻ ԵՎ ԱՅԼ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շենգավիթ» ԲԿ ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

հազար դրամ

Ցուցանիշի անվանումը	ծնթգ	2025թ.	2024թ.
Շարունակվող գործունեությունից			
Հասույթ	4	6,479,155	6,107,140
Վաճառքի ինքնարժեք	5	(5,983,612)	(5,572,467)
Համախառն շահույթ (վնաս)		**495,543**	**534,672**
Այլ եկամուտներ	6	445,954	408,057
Վարչական ծախսեր	7	(776,716)	(779,392)
Այլ ծախսեր	8	(95,856)	(282,181)
Ֆինանսական ծախսեր	9	(321,257)	(316,764)
Շահույթ (վնաս) մինչև հարկումը		**(252,332)**	**(435,608)**
Շահութահարկի գծով ծախս	10	2,147	5,297
Տարվա շահույթ(վնաս) շարունակվող գործունեությունից		**(250,185)**	**(430,311)**
Ընդհատված գործունեության զուտ շահույթ (վնաս)		-	-
Ընդամենը տարվա շահույթ (վնաս)		**(250,185)**	**(430,311)**
Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ		-	-
Ընդհանուր համապարփակ ֆինանսական արդյունքներ		**(250,185)**	**(430,311)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026 թվականի հունիսի 17-ին:

Տնօրեն Ա. Ուռումյան

Փորձագետ-հաշվապահ Լ. Մովսիսյան
հեռ՝ 3 21 0530

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շենգավիթ» ԲԿ ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

հազար դրամ

ԱԿՏԻՎՆԵՐ	ծնթգ	31.12.2025թ.	31.12.2024թ.
1. Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	11	5,814,788	5,834,874
Ֆինանսական վարձակալությամբ ստացված հիմնական միջոց		1,268,742	1,097,735
Ոչ նյութական ակտիվներ	12	54,568	61,295
Տրամադրված երկարաժամկետ փոխառություն	13	20,000	20,000
Ներդրումային գույք		134,196	138,003
Այլ ոչընթացիկ ակտիվներ		20,954	-
Հետաձգված հարկային ակտիվ		-	-
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		**7,313,248**	**7,151,907**
2. Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	339,012	334,841
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	372,847	216,507
Ընթացիկ շահութահարկի գծով կանխավճար		-	-
Ֆինանսական վարձակալության կամ ֆակտորինգի գծով սպասու	16	21,494	30,860
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	17	4,771	4,449
Այլ ընթացիկ ակտիվներ		-	-
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**738,124**	**586,657**
ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ		**8,051,373**	**7,738,564**

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Սեփական կապիտալ			
Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումար	18	594,796	594,796
Էմիսիոն եկամուտ		2,173	2,173
Հիմնական միջոցների վերագնահատումից արժեքի աճ		155,445	165,810
Կուտակված շահույթ		(1,310,095)	(1,134,993)
Պահուստային կապիտալ		10,152	10,152
Սեփական կապիտալի այլ տարրեր		198,297	198,297
Ընդամենը սեփական կապիտալ		**(349,232)**	**(163,765)**
2. Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ	19	5,021,087	4,858,748
Ակտիվներին վերաբերող շնորհներ	20	139,231	145,503
Հետաձգված հարկային պարտավորություններ		121,585	126,006
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**5,281,902**	**5,130,257**
3. Ընթացիկ պարտավորություններ			
Կարճաժամկետ վարկեր	21	1,049,452	831,926
Կարճաժամկետ փոխառություններ	22	47,000	65,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	23	1,812,220	1,681,824
Շահութահարկի գծով պարտավորություն		-	108
Եկամուտներին վերաբերող շնորհներ	24	31,779	23,355
Պահուստներ	25	178,252	169,859
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**3,118,703**	**2,772,072**
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ		**8,051,373**	**7,738,564**

11-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շենգավիթ» ԲԿ ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

հազար դրամ

	Կանոնադրական կապիտալ	Էմիսիոն եկամուտ	Վերագնահատումից արժեքի աճ	Կուտակված շահույթ (վնաս)	Պահուստային կապիտալ	Սեփական կապիտալի այլ տարրեր	Ընդամենը
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2023թ.	**39,797**	**2,173**	**176,175**	**(709,822)**	**10,152**	**198,297**	**(283,228)**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը				(7,500)			(7,500)
Վերահաշվարկված մնացորդը	**39,797**	**2,173**	**176,175**	**(717,322)**	**10,152**	**198,297**	**(290,728)**
Հաշվետու տարվա շահույթ կամ վնաս				(430,311)			(430,311)
Ներքին շարժ			(12,640)	12,640			-
Կանոնադրական կապիտալի համալրում	554,999						554,999
Սեփական կապիտալի հետ այլ գործարքներ			2,275				2,275
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2024թ.	**594,796**	**2,173**	**165,810**	**(1,134,993)**	**10,152**	**198,297**	**(163,765)**
Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխությունների ընդհանուր արդյունքը և էական սխալների ճշգրտումը				62,443			62,443
Վերահաշվարկված մնացորդը	**594,796**	**2,173**	**165,810**	**(1,072,550)**	**10,152**	**198,297**	**(101,322)**
Հաշվետու տարվա շահույթ կամ վնաս				(250,185)			(250,185)
Ներքին շարժ			(12,640)	12,640			-
Սեփական կապիտալի հետ այլ գործարքներ			2,275				2,275
Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2025թ.	**594,796**	**2,173**	**155,445**	**(1,310,095)**	**10,152**	**198,297**	**(349,232)**

11-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

«Շենգավիթ» ԲԿ ՓԲԸ

2025թ. դեկտեմբերի 31-ին
ավարտված տարվա համար

հազար դրամ

Հոդվածի անվանումը	2025թ.	2024թ.
Արտադրանքի, ապրանքների, աշխատանքների, ծառայությունների իրացումից մուտքեր	6,609,397	6,237,827
Գործառնական այլ գործունեությունից մուտքեր	39,779	251,593
Ընդամենը մուտքեր	***6,649,176***	***6,489,421***
Նյութերի, ապրանքների ձեռքբերման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գծով ելքեր	1,706,101	1,494,662
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	3,058,058	3,591,438
Վճարումներ բյուջե	1,071,532	13,099
Վճարումներ սոցիալական ապահովագրության հիմնադրամ	-	93,500
Գործառնական այլ գործունեությունից ելքեր	169,258	389,350
Ընդամենը ելքեր	***6,004,948***	***5,582,049***
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***644,227***	***907,372***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	-
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների վաճառքներից	21,000	555,000
Տրամադրված փոխառությունից	25,285	
Ընդամենը ներդրումային գործունեությունից մուտքեր	***46,285***	***555,000***

Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների ելքեր	-	-
Ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների ձեռք բերման գծով	122,434	35,473
Տրամադրված փոխառությունից	25,285	-
Ընդամենը ներդրումային գործունեությունից ելքեր	***147,719***	***35,473***
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(101,434)***	***519,527***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր	-	-
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների մուտքեր	-	-
Ստացված շնորհ	-	-
Ստացված տոկոս	22	37
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից	-	554,999
Ստացած փոխառությունից և վարկերից	10,494,381	7,634,542
Ընդամենը ֆինանսական գործունեությունից մուտքեր	***10,494,403***	***8,189,578***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների ելքեր	-	-
Ստացված վարկերի և փոխառությունների մարումից	10,796,765	9,343,533
Սեփական կապիտալի գործիքների թողարկումից և վերավաճառքից	-	-
Վճարված շահաբաժիններ և տոկոսներ	239,893	275,744
Ընդամենը ֆինանսական գործունեությունից ելքեր	***11,036,657***	***9,619,277***
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	***(542,255)***	***(1,429,699)***
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր	***539***	***(2,801)***
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ	***(217)***	***(143)***
Դրամական միջոցների մնացորդը տարվա սկզբին	***4,449***	***7,392***
Դրամական միջոցների մնացորդը տարվա վերջին	***4,771***	***4,449***

11-ից 36 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Ծանոթագրություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալից մասերի վերաբերյալ համառոտագրից և այլ բացատրական տեղեկատվությունից

«Շենգավիթ» ԲԿ ՓԲԸ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

1. Տեղեկատվություն Ընկերության մասին

«Շենգավիթ» ԲԿ փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) շահույթ հետապնդող առևտրային կազմակերպություն է, որը ստեղծվել է ՀՀ Կառավարության 01.12.2011թ. թիվ 1191 որոշմամբ «Թիվ 3 կլինիկական ծննդատուն» առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերն ուղղակի վաճառքի ձևով իր աշխատավորական կոլեկտիվին մասնավորեցման արդյունքում, հանդիսանալով վերջինիս իրավահաջորդը:

Ընկերության գտնվելու վայրն է՝ ՀՀ, ք. Երևան, Մանանդյան 9

Ընկերության հիմնական գործունեության տեսակներն են՝

ա) բնակչության բժշկական օգնություն և սպասարկում:

Ընկերության աշխատակիցների թվաքանակը 31.12.2025թ.-ին կազմել է մոտավորապես 879 մարդ (31.12.2024թ.-ին՝ 838 մարդ):

2. Պատրաստման հիմունքները

2.1. Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ) և Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների՝ հրապարակված Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից, և Մեկնաբանությունների համաձայն (միասին՝ ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ):

2.2. Անընդհատության սկզբունք

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են անընդհատության սկզբունքի հիման վրա:

2.3 Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով:

2.4. Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթը

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն (դրամ) է, որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը: Դրամով ներկայացված ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է հազարների ճշտությամբ:

2.5. Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառում

Ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ համապատասխան կազմման համար Ղեկավարությունը կատարել է ակտիվների և պարտավորությունների ներկայացմանը, ինչպես նաև պայմանական պարտավորությունների և ակտիվների բացահայտմանը վերաբերող մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից:

2.6. Նոր և վերանայված ստանդարտներ և մեկնաբանություններ

Ընթացիկ տարում Ընկերությունն ընդունել է իր գործունեության համար կիրառելի և 2024թ. հունվարի 01-ից սկսվող ժամանակաշրջանների համար ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) և ՀՀՄՍԽ-ի Մեկնաբանման կոմիտեի (ՄԿ) կողմից:

Ներքոհիշյալ նոր ստանդարտներն ու փոփոխությունները, որոնք առաջին անգամ կիրառվել են 2024թ.-ին, էական ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

* «Պարտավորությունների դասակարգումը որպես ընթացիկ կամ ոչ ընթացիկ» (ՀՀՄՄ 1 փոփոխություններ),
* «Վարձակալության գծով պարտավորությունը վաճառք և հետադարձ վարձակալությամբ գործարքներում» (ՀՀՄՄ 16 փոփոխություններ),
* «Մատակարարման շղթայի ֆինանսավորման մեխանիզմները» (ՀՀՄՄ 7 և ՖՀՄՄ 7 փոփոխություններ),

2.7. Ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերությունում

Այս ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք դեռ չեն գործում և Ընկերությունը նախօրոք չի կիրառել :

ա) ՖՀՄՄ 18 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում և բացահայտում»

ՖՀՄՄ 18-ը կփոխարինի ՀՀՄՄ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան հաշվետու ժամանակաշրջանների համար: Նոր ստանդարտը ներկայացնում է հետևյալ հիմնական նոր պահանջները.

- Կազմակերպություններից պահանջվում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում բոլոր եկամուտները և ծախսերը դասակարգել ըստ հինգ դասերի՝ գործառնական, ներդրումային, ֆինանսավորման, ընդհատված գործառնություններ և շահութահարկ: Կազմակերպություններից նաև պահանջվում է ներկայացնել նոր սահմանված գործառնական շահույթի ենթագումարը: Կազմակերպության զուտ շահույթը չի փոխվի:
- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչները բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների մեկ ծանոթագրությունում:
- Տրվում է ընդլայնված ուղեցույց ֆինանսական հաշվետվություններում տեղեկատվությունը խմբավորելու վերաբերյալ:

Բացի այդ բոլոր կազմակերպություններից պահանջվում է օգտագործել գործառնական շահույթի ենթագումարը որպես մեկնարկային կետ դրամական հոսքերի մասին հաշվետվության համար՝ անուղղակի մեթոդով գործառնական գործունեության դրամական հոսքերը ներկայացնելիս:

բ) Այլ հաշվապահական հաշվառման ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՄ 21-ի փոփոխություններ)
- Ֆինանսական գործիքների դասակարգում և չափում (ՖՀՄՄ 9-ի և ՖՀՄՄ 7-ի փոփոխություններ)

3. Նշանակալի հարցերի նկատմամբ կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս նշանակալի հարցերի նկատմամբ կիրառվել է ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը: Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն:

Ներկայացման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները կազմված են համաձայն ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ ՖՀՄՄ) և կիրառվում է սկզբնական արժեքի հիմունքը բացառությամբ որոշ վերագնահատված ակտիվների և ֆինանսական գործիքների: Սկզբնական արժեքը ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչման

պահին վճարված (վճարվելիք), ստացված (ստացվելիք) դրամական միջոցների չափն է, իսկ ոչ դրամային հատուցման դեպքում՝ հատուցման իրական արժեքը:

Ստորև ներկայացված են հաշվապահական հաշվառման հիմնական քաղաքականությունները.

3.1 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություններում ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին:

Ակտիվը համարվում է ընթացիկ, երբ

ա) ակնկալվում է այն իրացնել, վաճառել կամ սպառել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ) պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ) ակնկալում է այն իրացնել հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում,

դ) այն դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք, բացառությամբ երբ դրա փոխանակումը կամ օգտագործումը՝ պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիսների ընթացքում:

Բոլոր այլ ակտիվները համարվում են ոչ ընթացիկ:

Պարտավորությունը համարվում է ընթացիկ, երբ

ա)ակնկալվում է այն մարել սովորական գործառնական փուլի ընթացքում,

բ)պահվում է հիմնականում առևտրական նպատակներով,

գ)ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո տասներկու ամսվա ընթացքում

դ)կազմակերպությունը չունի անվերապահ իրավունք՝ հետաձգելու մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը տասներկու ամիս:

Բոլոր այլ պարտավորությունները համարվում են ոչ ընթացիկ:

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ծախսերը ներկայացվում են ըստ գործառնության դասակարգմամբ:

Տարեկան ֆինանսական հաշվետվություններում ներկայացվում է միայն մեկ տարվա համադրելի տեղեկատվություն:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը կազմվում և ներկայացվում է ուղղակի մեթոդով:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում տոկոսների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություններում շահաբաժինների գծով ներհոսքերն ու արտահոսքերը դասակարգվում են համապատասխանաբար որպես ներդրումային գործունեությունից ներհոսքեր և ֆինանսավորման գործունեությունից արտահոսքեր:

Ֆինանսական հաշվետվություններում էական տեղեկատվությունը ներկայացվում է առանձին:

3.2. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Ինքնարժեքը հաշվարկվում է «Առաջին մուտք առաջին ելք» /ԱՄԱԵ/ բանաձևով և ներառում է ձեռքբերման արժեքը, վերամշակման ծախսումները և այլ ծախսումները, որոնք անհրաժեշտ են պաշարները գտնվելու վայր հասցնելու և վիճակի բերելու համար: Պատրաստի և անավարտ արտադրանքի ինքնարժեքում ներառվում են նաև արտադրական վերադիր ծախսումները՝ հիմնվելով արտադրական նորմատիվային ցուցանիշների վրա: Արտադրական նորմատիվները հաստատվում են տնօրինության կողմից և ենթակա են պարբերական վերանայման:

Իրացման զուտ արժեքը դա սովորական գործունեության ընթացքում հնարավոր վաճառքի գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

Կազմակերպությունում արտադրանքը թողարկվում է շարունակական հիմունքով մեծ քանակությամբ, ուստի փոխառության ծախսումները չեն կապիտալացվում:

Պաշարների նյութեր բաժնում ներառվում են նաև այն ակտիվները, որոնց ծառայության ժամկետը չի գերազանցում մեկ տարին՝ անկախ դրանց արժեքից: Դրանք են պահեստամասերը, սպասարկող սարքավորումները, գործիքները և հարմարանքները, արտադրական և տնտեսական

գույքը, ժամանակավոր կառույցները, հատուկ հագուստը և կոշկեղենը, անկողնային պարագաները, ճաշարանային սպասքը և այլն: Այս ակտիվները ապաճանաչվում են դրանց շահագործումը սկսելու պահին:

3.3. Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների բոլոր դասերը, բացի շենք ու շինությունները, հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, իսկ շենք ու շինությունները հաշվառվում են վերագնահատված արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է հիմնական միջոցի միավորի ձեռքբերմանը կամ կառուցմանը վերաբերող բոլոր այն ծախսումները, որոնք անհրաժեշտ են այն աշխատանքային վիճակի բերելու համար: Սկզբնական արժեքը իր մեջ կարող է ներառել նաև փոխառության ծախսումները (տես փոխառության ծախսումներ բաժինը), ինչպես նաև ապատեղակայման, քանդման և տեղանքի վերականգնման գնահատված ծախսումների գումարը (տես պահուստներ բաժինը), ինչպես նաև ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը:

Հիմնական միջոցների հետագա ծախսումները՝ ներառյալ նշանակալի մասերի փոխարինման արժեքը ավելացվում են ճանաչված հիմնական միջոցի արժեքին, եթե հավանական է դրա գծով ապագա տնտեսական օգուտների ներհոսք և արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքը ապաճանաչվում է: Ամենօրյա սպասարկման ծախսումները՝ ներառյալ մանր դետալների ծախսումները ճանաչվում են ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Հողամասը և շենքերը առանձին ակտիվներ են դիտարկվում և հաշվառվում են առանձին-առանձին, նույնիսկ երբ դրանք ձեռք են բերվում միասին:

Հիմնական միջոցների մնացորդային արժեքը որոշվում է որպես այն գումարը, որով հնարավոր կլիներ վաճառել ակտիվը տվյալ պահին, եթե լիներ այն տարիքի և վիճակի, որն ակնկալվում էր, որ կլիներ դրա օգտակար ծառայության վերջում:

Այն դեպքերում, երբ ակտիվը օգտակար ծառայության վերջում որպես թափոն չունի զգալի արժեք, և գնահատված օգտակար ծառայության ժամկետը գերազանցում է մնացած տնտեսական ծառայության ժամկետի 80%-ը, ապա մնացորդային արժեքը գնահատվում է 0:

Մաշվածության մեթոդը արտացոլում է այն մոդելը, որով կազմակերպությունը ակնկալում է սպառել ակտիվի տնտեսական օգուտները: Եթե գնահատման պահին տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ, ապա մաշվածության հաշվարկման համար օգտագործվում է ուղիղ գծային մեթոդը: Առանձին բաղադրիչների համար կարող է հաշվարկվել առանձին մաշվածություն:

Յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում կազմակերպության տնօրենի հրամանով ստեղծված հանձնաժողովների կողմից վերանայվում են հիմնական միջոցների մնացած օգտակար ծառայության ժամկետները, մնացորդային արժեքները և մաշվածության հաշվառման մեթոդները:

Հիմնական միջոցների օգտակար ծառայությունները որոշելու համար կազմակերպությունն առաջնորդվում է ըստ դասերի հետևյալ ուղեցույցերով.

- Շենքեր, շինություններ 20 տարի,
- Մեքենա-սարքավորումներ 5 տարի,
- Բեռնատար ավտոմեքենաներ 5 տարի,
- Մարդատար ավտոմեքենաներ 5 տարի,
- Տնտեսական և գրասենյակային գույք 5 տարի,
- Համակարգչային տեխնիկա 1 տարի:

Ակտիվի մաշվածության հաշվարկը սկսվում է, երբ այն մատչելի է օգտագործման համար, և դադարում է ակտիվի որպես վաճառքի համար պահվող դասակարգվելուց և ակտիվն ապաճանաչելուց:

3.4. Ներդրումային գույք

Ներդրումային գույք է համարվում այն գույքը (հող կամ շինություն), որը պահվում է վարձակալությունից և/կամ դրա արժեքի աճից եկամուտ վաստակելու նպատակով: Ներդրումային

գույքը չափվում է սկզբնական արժեքով և կիրառվում է հիմնական միջոցների սկզբնական արժեքի մոդելով հաշվառման կանոնները ըստ ՀՀՄՍ 16-ի:

3.5. Վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվներ և օտարման խումբ

Ոչ ընթացիկ ակտիվները (կամ օտարման խումբը) դասակարգվում են որպես վաճառքի համար պահվող ոչ ընթացիկ ակտիվ, երբ դրանց հաշվեկշռային արժեքը ենթակա է փոխհատուցման վաճառքի ձևով և վաճառքի տեղի ունենալը շատ հավանական է:

Հիմնական միջոցի, ոչ նյութական ակտիվի, ներդրումային գույքի, բաժնեմասնակցության կամ սկզբնական արժեքի մեթոդով հաշվառվող ներդրումների, ինչպես նաև օտարման խումբ կազմող ակտիվների և պարտավորությունների վերադասակարգման համար անհրաժեշտ է, որ ակտիվը (կամ խումբը) իր ներկա վիճակում պատրաստ լինի անմիջապես վաճառելու համար և ակտիվորեն առաջարկվի շուկայում խելամիտ գնով:

Որպես վաճառքի համար պահվող ակտիվ կամ օտարման խմբի բաղադրիչ վերադասակարգումից անմիջապես առաջ ակտիվներն ու պարտավորությունները վերաչափվում են ըստ համապատասխան ՖՀՄՍ-ների և ակտիվի կամ պարտավորության հաշվապահական հաշվառման քաղաքականության: Հետագայում դրանք չափվում են վերադասակարգման պահի հաշվեկշռային արժեքից և հաշվետու ամսաթվի իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսումներից նվազագույնով: Այս վերաչափումները ամբողջությամբ ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս:

3.6. Ոչ նյութական ակտիվներ

Առանձին ձեռքբերված ոչ նյութական ակտիվներն ունեն որոշակի օգտակար ծառայության ժամկետ և հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ձեռնարկատիրական գործունեության միավորմամբ ձեռքբերված ոչ նյութական ակտիվները հաշվառվում են ձեռնարկատիրական գործունեության ձեռքբերման օրվա իրական արժեքով՝ հանած կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեզրկումից կորուստները:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված հետազոտության ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր գիտական կամ տեխնիկական գիտելիքներ և իմացություն ձեռքբերելու ակնկալիքով, ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ներստեղծված ոչ նյութական ակտիվների գծով կատարված մշակման ծախսումները՝ նրանք, որոնք կատարվում են նոր կամ էականորեն բարելավված նյութերի, սարքավորումների, արտադրատեսակների, գործընթացների, համակարգերի կամ ծառայությունների ստեղծումը պլանավորելու և նախագծելու համար, ճանաչվում են որպես ոչ նյութական ակտիվ միայն այն դեպքում երբ.

- ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել,
- առկա է ակտիվն ավարտուն վիճակի հասցնելու, օգտագործելու կամ վաճառելու տեխնիկական իրագործելիությունը, ղեկավարության մտադրությունն ու կարողությունը,
- ապահովված է մշակումն ավարտելու համար անհրաժեշտ ռեսուրսների առկայությունը,
- հնարավոր է ցուցադրել այն, թե ինչպես է ոչ նյութական ակտիվը ստեղծելու ապագա տնտեսական օգուտներ:

Մնացած մշակման ծախսումները ճանաչվում են որպես ժամանակաշրջանի ծախս:

Ամորտիզացիան հաշվառվում է գնահատված օգտակար ծառայության ընթացքում ուղիղ գծային մեթոդով, եթե տնտեսական օգուտների անհավասարաչափ սպառումը բացահայտ չէ: Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայության ժամկետները որոշվում են ղեկավարության կողմից կատարված կանխատեսումների և ֆինանսական պլանավորման հիման վրա: Օգտակար ծառայությունն ու ամորտիզացիոն մեթոդը վերանայվում են յուրաքանչյուր տարվա վերջում:

Օգտակար ծառայության գնահատված ժամկետները 5 տարի են:

Ոչ նյութական ակտիվների հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն դեպքում, երբ դրանք ավելացնում են ապագա տնտեսական օգուտների ներհոսքը: Մնացած բոլոր հետագա ծախսումները՝ ներառյալ տարեկան վճարներն ու ներստեղծված ապրանքանիշերը ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

3.7. Ոչ ընթացիկ նյութական ակտիվների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ոչ ընթացիկ նյութական և ոչ նյութական ակտիվների գծով կատարվում է վերլուծություն արժեզրկման հայտանիշ բացահայտելու նպատակով: Արժեզրկման հայտանիշի առկայության դեպքում գնահատվում է այդ ակտիվի փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես իրական արժեքից (հանած վաճառքի անհրաժեշտ ծախսերը) և օգտագործման արժեքից առավելագույնը:

Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների ապագա հոսքերը հաշվարկվում են ներկա արժեքով՝ օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի շուկայի ներկա գնահատականը և ակտիվին բնորոշ ռիսկերը, որը սովորաբար կազմակերպության լրացուցիչ փոխառության տոկոսադրույքն է:

Երբ առանձին ակտիվի փոխհատուցվող գումարը հնարավոր չէ որոշել, ապա փոխհատուցվող գումարը որոշվում է այն դրամաստեղծ միավորի համար, որին պատկանում է տվյալ ակտիվը: Կորպորատիվ ակտիվները բաշխվում են առանձին դրամաստեղծ միավորներին խելամիտ և հետևողական բաշխման հիմունքով, որը սովորաբար հաշվեկշռային արժեքների համամասնությունն է:

Անորոշ ժամկետով ոչ նյութական ակտիվների, անավարտ ոչ նյութական ակտիվների և գուդվիլի արժեզրկումը ստուգվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվին:

Արժեզրկումից կորուստը ճանաչվում է, երբ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է դրա փոխհատուցվող գումարը: Արժեզրկումից կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում և հակադարձվում է միայն այն դեպքում, եթե փոխվել են փոխհատուցվող գումարը որոշելու համար օգտագործվող գնահատումները:

Արժեզրկումից կորուստը հակադարձվում է միայն այն չափով, որ ակտիվի հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ առանց համապատասխան մաշվածության և ամորտիզացիայի, եթե արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ:

3.8. Արտարժույթ

Կազմակերպության գործունեության ֆունկցիոնալ արժույթ է համարվում ՀՀ դրամը, քանի որ գործունեությունը հիմնականում ծավալվում է ՀՀ տարածքում: ՀՀ դրամն է հանդիսանում նաև կազմակերպության ներկայացման արժույթը:

Արտարժույթով գործառնությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ճանաչման պահի սփոթ փոխանակման փոխարժեքով: Հետագա հաշվետու ժամանակաշրջանների վերջի դրությամբ դրամային հոդվածների մնացորդները վերահաշվարկվում են հաշվետու ամսաթվի սփոթ փոխանակման փոխարժեքով: Առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են որպես շահույթ կամ վնաս ֆինանսական արդյունքներում:

Արտարժույթով գործարքների և՛ սկզբնական ճանաչման համար և՛ հետագա վերաչափման համար կիրառվող սփոթ փոխարժեք է համարվում ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տվյալ օրվա հաշվարկային փոխարժեքը:

3.9. Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, կազմում են այդ ակտիվի արժեքի մաս: Այլ փոխառության ծախսումները ճանաչվում են որպես ծախս:

Այն ակտիվն է համարվում որակավորվող, որին անհրաժեշտ է զգալի ժամանակահատված (սովորաբար 6 ամսից ոչ պակաս), որպեսզի այն պատրաստ լինի ըստ նշանակության օգտագործման կամ վաճառքի համար:

Փոխառության ծախսումները կարող են չկապիտալացվել, երբ շարունակական հիմունքով արտադրվող պաշարների անկախ արտադրական պրոցեսի տևողությունից և կենսաբանական ակտիվի հետ են կապված:

Կապիտալացվող փոխառության ծախսումները նվազեցվում են բացառապես որակավորվող ակտիվ ձեռքբերելու նպատակով ստացված փոխառու միջոցների ժամանակավոր ներդրումներից ստացված եկամուտների չափով:

3.10. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Դրամական միջոցների և դրանց համարժեքների բաղկացուցիչներ են համարվում դրամական միջոցները դրամարկղում, դրամական միջոցները ճանապարհին, ցպահանջ հաշիվների մնացորդները, մինչև 3 ամիս մարման ժամկետով հեշտ իրացվելի և ցածր ռիսկային ֆինանսական ներդրումների մնացորդները, ինչպես նաև բանկային օվերդրաֆտները: Վերջիններիս մնացորդները արտացոլվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվության ընթացիկ պարտավորություններ բաժնում:

3.11. Հասույթ

Հասույթը չափվում է ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հասույթը ներկայացվում է զեղչերի, հետ վերադարձի և քանակային զիջումների ազդեցության ճշգրտված գումարով:

Վաճառքից հասույթը ճանաչվում է այն պահին, երբ փոխանցվում են սեփականության հետ կապված նշանակալի ռիսկերն ու հատույցները, ակնկալվում է տնտեսական օգուտների ներհոսք, ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել, չի պահպանվում վերահսկողություն ապրանքների նկատմամբ և հասույթի գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

Ռիսկերն ու հատույցները համարվում են փոխանցված այն պահին, երբ ապրանքները ստացվում են հաճախորդի կողմից: Այնուամենայնիվ արտահանումների դեպքում ռիսկերն ու հատույցները փոխանցվում են այն պահին, երբ ապրանքները փոխանցվում են տրանսպորտային կազմակերպությանը, քանի որ սովորաբար այդ ապրանքները ենթակա չեն հետ վերադարձման: Առանձին գործարքներում կարող են սահմանվել հատուկ արտոնյալ պայմաններ, որոնց պատճառով ռիսկերի և հատույցների փոխանցման պահը հետաձգվի:

Եթե վճարման ժամկետը հետաձգվում է 60 օրից ավել ժամանակահատվածով, ապա հասույթը չափվում է ակնկալվող հատուցման զեղչված արժեքով՝ կիրառելով պայմանական տոկոսադրույքը:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը գերազանցում է սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում այն դրույքը, որը զեղչում է սպասվող վճարումների գումարը՝ հասցնելով վաճառքի ընթացիկ գնին:

Այն դեպքերում, երբ հատուցման անվանական արժեքը չի գերազանցում սովորաբար առաջարկվող վաճառքի գինը, ապա պայմանական տոկոսադրույք է համարվում նմանատիպ պայմաններով ֆինանսական գործիքի գերակշռող եկամտաբերության դրույքը:

Մինչև 60 օր վճարման ժամկետով իրացումների դեպքում տոկոսների հաշվարկ չի կատարվում և հասույթը ճանաչվում է հատուցման անվանական արժեքով:

Ծառայությունների մատուցումից հասույթը ճանաչվում է հաշվետու ամսաթվի դրությամբ ավարտվածության աստիճանի հիմունքով: Այն դեպքերում, երբ ավարտվածության աստիճանը հնարավոր չէ չափել, հասույթը ճանաչվում է միայն կատարված այն ծախսումների չափով, որոնք կփոխհատուցվեն:

Այն դեպքերում, երբ դա հնարավոր է, ավարտվածության աստիճանը որոշվում է կատարված ծախսումների և գործարքի գնահատված ընդհանուր ծախսումների հարաբերակցությամբ: Մնացած դեպքերում ավարտվածության աստիճանը որոշվում է տվյալ ամսաթվի դրությամբ կատարված աշխատանքների ուսումնասիրությամբ:

Տոկոսային հասույթը ճանաչվում է արդյունավետ տոկոսադրույքով, այնպես, ինչպես նկարագրված է ըստ ՀՀՄՍ 39-ում:

3.12. Պետական շնորհներ

Պետական շնորհները ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ՝ ներկայացվելով ֆինանսական վիճակի մասին հաշվետվության պարտավորություններ բաժնում, այն պահին, երբ կա բավարար հավաստիացում, որ կազմակերպությունը ստանալու է շնորհը և բավարարելու է դրան կից պայմանները:

Այն շնորհները, որոնց հիմնական պայմանն է գնել, կառուցել կամ այլ կերպ ձեռքբերել երկարաժամկետ ակտիվ (ակտիվներին վերաբերող շնորհներ), սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

Այլ պետական շնորհները (եկամուտներին վերաբերող շնորհներ) սկզբնապես ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ, իսկ հետագայում ճանաչվում են շահույթ/վնասում սիստեմատիկ հիմունքով՝ համապատասխան այն ծախսումների ծախս ճանաչմանը, որոնց փոխհատուցման համար նախատեսված են:

Պետական շնորհները, որոնք տրամադրվում են ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն, պետք է ճանաչվեն շահույթ/վնասում այն պահին, երբ դառնում են ստացման ենթակա:

3.13. Պահուստներ

Պահուստները ճանաչվում են, երբ որպես անցյալ դեպքերի արդյունք կազմակերպությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն, որը հնարավոր է արժանահավատորեն չափել և որը կատարելու համար պահանջվում է տնտեսական օգուտների արտահոսք:

Երաշխիքների և անբարենպաստ պայմանագրերի գծով պահուստները չափվում են պարտականությունը կատարելու համար անհրաժեշտ միջոցների իրական արժեքի լավագույն գնահատականի հիման վրա՝ ելնելով անցյալ փորձից և ապագա ակնկալիքներից: Գնահատումը կատարվում է տնօրենի հրամանով կազմված հանձնաժողովների կողմից:

Ապատեղակայման և տեղանքի բարեկարգման գծով պահուստները չափվում են գնահատված գումարի ներկա արժեքով, եթե պահուստի ժամկետը գերազանցում է 5 տարին: Այսպիսի դեպքերում որպես զեղչման դրույք սովորաբար համարվում է կազմակերպության լրացուցիչ փոխառություն ներգրավվելու տոկոսադրույքը:

Արձակուրդային վճարների և հավանական պարգևավճարների գծով պահուստները գնահատվում են յուրաքանչյուր ամսվա վերջում՝ ելնելով ընթացիկ և սպասվող աշխատավարձերի գումարից, աշխատանքային օրենսդրության պահանջներից և այլ կանխատեսումներից: Զուգահեռ ստեղծվում է նաև պահուստ արձակուրդային վճարների կամ պարգևավճարների մասով գործատուի կողմից կատարվելիք սոցիալական ապահովության վճարների համար:

3.14. Էական սխալներ

Էական սխալներ՝ ընթացիկ ժամանակաշրջանում բացահայտված սխալներ են, որոնք այնպիսի նշանակություն ունեն, որ նախորդ մեկ կամ ավելի ժամանակաշրջանների ֆինանսական հաշվետվությունները չեն կարող այլևս արժանահավատ համարվել, իրենց ներկայացման թվի դրությամբ:

Նախորդող ժամանակաշրջաններին վերաբերող էական սխալների ուղղման գումարը պետք է արտացոլվի հաշվետու ժամանակաշրջանի հաշվետվությունում, ճշտելով չբաշխված շահույթի սկզբնական մնացորդը:

3.15. Ֆինանսական գործիքներ

Բոլոր ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են իրական արժեքով և դասակարգվում են հետևյալ կատեգորիաներում՝ ելնելով գործարքի նպատակից և ղեկավարության ակնկալիքներից.

Ֆինանսական ակտիվներ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական ակտիվներ,
- Տրամադրված փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ:

Ֆինանսական պարտավորություններ

- Շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ,
- Այլ ֆինանսական պարտավորություններ:

Կանոնավոր կերպով գնումների և վաճառքների դեպքում ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները ճանաչվում կամ ապաճանաչվում են առևտրի ամսաթվին:

Վարկերի և փոխառությունների գծով ֆինանսական ակտիվները ու պարտավորությունները ճանաչվում են դրանց տրամադրման ամսաթվին:

Ֆինանսական գործարքի հետ կապված ծախսումները ներառվում են համապատասխան ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքում, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և պարտավորությունների, որոնք չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Վերջիններիս դեպքում դրանք ճանաչվում են որպես ընթացիկ ժամանակաշրջանի ծախս:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքը որոշվում է շուկայի հիման վրա: Սակայն պարտքային գործիքի շուկայի բացակայության դեպքում իրական արժեքը հաշվարկվում է որպես սպասվող հոսքերի ներկա արժեք՝ որոշված նմանատիպ գործիքի միջին շուկայական տոկոսադրույքով: Այն դեպքերում, երբ ֆինանսական գործարքի տոկոսադրույքը տարբերվում է նմանատիպ ֆինանսական գործիքի միջին շուկայական տոկոսադրույքից, սակայն տարբերությունը չի գերազանցում շուկայական դրույքի 20%-ը, ապա ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական արժեքը համարվում է ճանաչման օրվա դրությամբ իրական արժեք:

Անտոկոս կամ ցածր տոկոսով ստացված ցպահանջ վարկերի և փոխառությունների իրական արժեք է համարվում վարկի կամ փոխառության անվանական արժեքը, քանի որ դրանք ենթակա են մարման ցանկացած պահին՝ հնարավորության առկայության դեպքում, և կազմակերպության ղեկավարությունն ակնկալում է մարել դրանք շատ կարճ ժամկետներում:

Տոկոսային եկամուտներն ու ծախսերը հաշվարկվում են արդյունավետ տոկոսադրույքով և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական եկամուտ կամ ծախս, եթե չեն ներառվում որակավորվող ակտիվի ինքնարժեքում համաձայն ՀՀՄՍ 23-ի: Այնուամենայնիվ ֆինանսական հաշվետվություններում շահույթով կամ վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների և պարտավորությունների գծով հաշվարկված տոկոսները չեն առանձնացվում իրական արժեքի փոփոխությունից առաջացող օգուտից կամ վնասից:

Ֆինանսական ակտիվը և ֆինանսական պարտավորությունը հաշվանցվում են միայն այն դեպքում, երբ առկա է գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք և ղեկավարությունը մտադիր է կամ հաշվարկը (մարումը) իրականացնել զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

3.16. Ֆինանսական գործիքների արժեզրկում

Ֆինանսական ակտիվների համար յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ դիտարկվում է որևէ արժեզրկման հայտանիշի առկայությունը: Ֆինանսական ակտիվները ենթակա են արժեզրկման, եթե սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի դեպքերը /արժեզրկման հայտանիշ/ վկայում են այն մասին, որ ֆինանսական ակտիվի գծով սպասվող դրամական ներհոսքերը կարող են անբարենպաստ փոխվել:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների արժեզրկումը հաշվարկվում է որպես հաշվեկշռային արժեքի և վերանայված դրամական հոսքերի զեղչված արժեքի, հաշվարկված սկզբնական տոկոսադրույքով, տարբերությունը:

Առևտրային դեբիտորական պարտքերի գծով արժեզրկումը գնահատվում է հավաքական հիմունքով՝ ելնելով համանման պարտքային բնութագրեր ունեցող պարտքերի պատմական կորուստների փորձից:

Եթե հետագայում արժեզրկումից կորուստը նվազում է որպես հետևանք մի դեպքի, որը տեղի է ունեցել արժեզրկումը ճանաչելուց հետո, ապա նախկինում ճանաչված արժեզրկումից կորուստը ենթակա է հակադարձման, բացառությամբ որպես վաճառքի համար մատչելի դասակարգված բաժնային գործիքների:

3.17. Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների

համար: Հետաձգված հարկային ակտիվները պետք է ճանաչվեն բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը: Այսպիսի հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չեն ճանաչվում, եթե ժամանակավոր տարբերությունն առաջանում է գուդվիլի սկզբնական ճանաչումից կամ այլ ակտիվների և պարտավորությունների սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքում, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ՝ հարկվող շահույթի վրա (բացի ձեռնարկատիրական գործունեության միավորումներից):

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում և նվազեցվում է այն չափով, որով այլևս հավանական չէ, որ Ընկերությունը կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնց կիրառման մեջ լինելն ակնկալվում է ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Հետաձգված հարկային պարտավորությունների և հետաձգված հարկային ակտիվների չափումն արտացոլում է հարկային հետևանքները, որոնք երևան են գալու՝ կախված այն եղանակից, որով Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ակնկալում է փոխհատուցել կամ մարել իր ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքները:

Հետաձգված հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցվում են, երբ կա իրավաբանորեն ամրագրված իրավունք՝ հաշվանցելու ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների դիմաց, և երբ դրանք վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից, և Ընկերությունը մտադիր է զուտ հիմունքով մարել ընթացիկ հարկային պարտավորություններն ու ակտիվները:

4.Բացահայտումներ էական հոդվածների վերաբերյալ

4. Հասույթ

000 դրամ

	2025թ.	2024թ.
Բժշկական օգնություն պետ.՝ պատվերի շրջանակներում	1,724,568	1,315,138
Բժշկական օգնություն սոցիալական անապահով ընտանիքներին	700,235	597,855
Բժշկական և այլ ծառայությունների մատուցումից հասույթ	4,054,352	4,194,147
Ընդամենը	**6,479,155**	**6,107,140**

5. Վաճառքի ինքնարժեք

000 դրամ

	2025թ.	2024թ.
Դեղորայքի գծով ծախսեր	1,256,702	1,165,267
Տնտեսական ապրանքների գծով ծախսեր	50,355	43,140
Գրենական պիտույքների գծով ծախսեր	11,384	11,665
Սննդամթերքի գծով ծախսեր	74,678	74,464
Այլ նյութերի գծով ծախսեր	3,197	2,639
Աշխատավարձ	3,626,166	3,370,141
Այլ ծախսեր	961,131	905,152
Ընդամենը	**5,983,612**	**5,572,467**

6. Այլ եկամուտներ

000 դրամ

	2025թ.	2024թ.
Տոկոսային եկամուտ	77,855	30,334
Այլ պաշարների վաճառքներից եկամուտներ	156	-
Պաշարների արժեքների փոփոխությունից.եկամուտներ	54	-
Վաճ.գծ.դեբիտոր.պարտք.կորուստ.հակադարձ. եկամուտներ	484	-
Ակտիվներին վերաբերող շնորհից եկամուտ	50,691	36,990
Վարձակալությունից եկամուտ	10,367	16,660
Հիմն. միջոցների վաճառքներից (օտարումից) եկամուտներ	4,601	-
Փոխարժեքային տարբերությունից օգուտ	54,634	42,189
Գործառնական այլ եկամուտ	247,114	281,884
Ընդամենը	**445,954**	**408,057**

7. Վարչական ծախսեր

000 դրամ

	2025թ.	2024թ.
Փոխհատուցումներ աշխատակիցներին	470,532	475,276
Հիմ.միջ.մաշվածություն, նորոգման և սպաս.ծախսեր	24,402	32,966
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	9,464	4,030
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	181,618	189,668
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	2,098	2,345
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	-	3,732
Բանկային ծառայությունների ծախսեր, ապահովագրության ծախսեր	44,157	43,985
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	13,798	9,420
Վարչական այլ ծախսեր	30,646	17,971
Ընդամենը	**776,716**	**779,392**

8. Այլ ծախսեր

000 դրամ

	2025թ.	2024թ.
1. Իրացման ծախսեր	*28,858*	*5,261*
Մարկետինգի և գովազդի ծախսեր	28,858	5,261
2. Գործառնական այլ ծախսեր	*66,980*	*261,744*
Վարձակալ.տրված հիմ.միջոց. մաշվածութ.ծախսեր		4,283
Խոտանված արտադրանքի հետ կապված ծախսեր	44,113	221
Ծախսեր տույժերից և տուգանքներից	8,733	234,922
Դեբիտորական պարտքերի կորուստների գծով պահուստ	214	-
Գործառնական այլ ծախսեր	13,919	22,318
3. Այլ ոչ գործառնական ծախսեր	*19*	*15,176*
Հիմնական միջոցների գծով արժեզրկումից կորուստներ	19	-
Ոչ ընթացիկ ակտիվների վաճառքից վնաս	-	15,176
Ընդամենը	**95,856**	**282,181**

9. Ֆինանսական ծախսեր

	000 դրամ	
	2025թ.	**2024թ.**
Ստացված ֆին. վարձակալության հետ կապված հաշվեգրված տոկոսներ	58,769	129,417
Ստացված վարկերի հետ կապված հաշվեգրված տոկոսներ	258,956	176,611
Ստացված փոխառությունների հետ կապված հաշվեգրված տոկոսներ	3,532	10,737
	321,257	**316,764**

10. Շահութահարկի գծով ծախս

	000 դրամ	
	2025թ.	**2024թ.**
Ընթացիկ հարկ	-	-
Հետաձգված հարկ	-	-
Հարկային ակտիվ*	(2,147)	(5,297)
Ընդամենը	**(2,147)**	**(5,297)**

*Հարկային ակտիվը և հետաձգված հարկը գոյացել է անտոկոս փոխառությունների զեղչման, ինչպես նաև աշխատողներին հասանելիք արձակուրդների պահուստի ձևավորման, հիմնական միջոցի վերագնահատման ժամանակ առաջացած ժամանակավոր տարբերություններից:

11. Հիմնական միջոցներ

000 դրամ

	Շենքեր, շինություններ	Կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Այլ հիմնական միջոցներ	Շշահատվող հիմնական միջոց	Հողամասեր	Տեղակայման ենթակա սարքավորում	Ընդամենը
Սկզբնական արժեք										
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**5,617,647**	**8,326**	**3,079,350**	**33,433**	**348,759**	**22,328**	**100,179**	**318,445**	**77,283**	**9,605,750**
Ավելացումներ այդ թվում	106,867		963,263		8,098					1,078,228
Վերագնահատումից										-
Նվազեցումներ	164,822		960,014		2,820		1,270			1,128,926
Ներքին շարժ										-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**5,559,692**	**8,326**	**3,082,599**	**33,433**	**354,037**	**22,328**	**98,909**	**318,445**	**77,283**	**9,555,052**
Ավելացումներ այդ թվում	146,594	740	58,054	70,000	25,485	800				301,673
Ներքին շարժ										-
Նվազեցումներ	1,742		213,097	33,333	15,322					263,494
Ներքին շարժ										-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**5,704,545**	**9,066**	**2,927,556**	**70,100**	**364,199**	**23,128**	**98,909**	**318,445**	**77,283**	**9,593,232**
Կուտակված մաշվածություն										
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**596,004**	**1,932**	**2,596,671**	**13,977**	**232,016**	**19,738**	**31,059**		-	**3,491,398**
Տարվա մաշվածությունը այդ թվում	108,398	432	491,200	4,167	38,564	847				643,608
Ներքին շարժ										-
Նվազեցումներ	22,537		389,471		2,820					414,827
Ներքին շարժ										-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**681,865**	**2,364**	**2,698,401**	**18,144**	**267,760**	**20,584**	**31,059**	-	-	**3,720,178**
Տարվա մաշվածությունը այդ թվում	116,790	439	206,768	7,818	40,987	937				373,737
Վերագնահատումից										-
Նվազեցումներ	4,146		275,551	20,452	15,322					315,471
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**794,509**	**2,802**	**2,629,617**	**5,510**	**293,425**	**21,521**	**31,059**	-	-	**3,778,444**
Զուտ հաշվեկշռային արժեք										
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**4,877,827**	**5,962**	**384,198**	**15,289**	**86,276**	**1,744**	**67,849**	**318,445**	**77,283**	**5,834,874**
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**4,910,036**	**6,263**	**297,939**	**64,590**	**70,774**	**1,607**	**67,849**	**318,445**	**77,283**	**5,814,788**

** 2025թ. հիմնական միջոցների խոշոր ավելացումները հիմնականում ներառում են.*

Անվանումը	000 դրամ Արժեք
Էլեկտրավիրաբուժական դանակ Zeus 400 upgrade	1,400
Mercedes-Benz S580 Maybach 4matic W1K6X7GB0MA024228, 2021թ., 4.0 լ. Turbo	70,000
Էլեկտրավիրաբուժական դանակ Zeus 400 upgrade	1,400
Էլեկտրավիրաբուժական դանակ Zeus 400 upgrade	1,400
Իմունոֆերմենտային անալիզատոր HTI ImmunoChem-2100 microplate reader	2,300
Կենսաանվտանգության պահարան Laminar-S NEOTERIC Class II	2,400
Վիրահատական սեղան ET300C	3,000
Վիրահատական սեղան ET300C	3,000
Վիրահատական սեղանի օրթոպեդիկ կցորդ	6,952
	91,852

** 2025թ. հիմնական միջոցների խոշոր նվազեցումները հիմնականում ներառում են.*

Անվանումը	000 դրամ Արժեք
Գերձայնային ապարատ, SONIX	10,267
Սարք Ֆաքսէմուլսիֆիկատոր	4,620
Կերատոկոնուսի բուժմ. համար նախատեսվածվիրաբուժ.սարք	5,455
Լիպոսակցիայի սարք Lipolite	16,003
Էնդովիրաբուժական հավաքածու (Օպտիկա ըստ Հոպկինսի,)	4,302
Լազրային սարքավ անոթային վիրահատ.և ֆլեբոլոգիայի հա	8,112
Ավտոմեքենա Mercedes-Mybach S 450 4 Matic	33,333
Ռենտգեն ապարատ	10,373
	92,465

* Հաշվետու ամսաթվի դրությամբ Հիմնադրամում առկա են զրո հաշվեկշռային արժեքով հաշվառվող 867,305 հազ. դրամ սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցներ:

12. Ոչ նյութական ակտիվներ

000 դրամ

	Համակարգչային ծրագրեր	Այլ ոչ նյութական ակտիվներ	Մշակման ընթացքում գտնվող ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**8,833**	**3,456**	**51,200**	**63,489**
Ավելացումներ այդ թվում	51,923	9,981	8,000	69,904
Վերագնահատումից				-
Նվազեցումներ			51,200	51,200
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**60,756**	**13,437**	**8,000**	**82,193**
Ավելացումներ այդ թվում			3,000	3,000
Վերագնահատումից				-
Նվազեցումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**60,756**	**13,437**	**11,000**	**85,193**
Կուտակված մաշվածություն				
Առ 31 դեկտեմբերի 2023թ.	**2,822**	**3,456**		**6,277**
Տարվա մաշվածությունը այդ թվում	12,411	2,209		14,620
Վերագնահատումից				-
Նվազեցումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**15,233**	**5,665**	**-**	**20,897**
Տարվա մաշվածությունը այդ թվում	6,400	3,327		9,727
Վերագնահատումից				-
Նվազեցումներ				-
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**21,633**	**8,992**	**-**	**30,624**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Առ 31 դեկտեմբերի 2024թ.	**45,523**	**7,772**	**8,000**	**61,295**
Առ 31 դեկտեմբերի 2025թ.	**39,123**	**4,445**	**11,000**	**54,568**

13. Տրամադրված երկարաժամկետ փոխառություններ

000 դրամ

	2025թ.		2024թ.	
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա
Մնացորդը տարեսկզբին	**20,000**	**20,000**	**20,000**	**20,000**
Տրամադրվել է տարվա ընթացքում	-	-	-	-
Մարվել է տարվա ընթացքում	-	-	-	-
Մնացորդը տարեվերջին	**20,000**	**20,000**	**20,000**	**20,000**

Բացահայտում

Փոխառությունը տրամադրվել է Լ.Ա.Պ.Ա ՍՊԸ-ին:

14. Պաշարներ

000 դրամ

	31.12.25թ.	31.12.24թ.
Դեղորայք և պարագաներ	249,859	260,342
Տարա և տարանյութեր	195	244
Շինանյութեր	9,508	9,508
Այլ նյութեր	79,450	64,746
Ապրանք	-	-
Ընդամենը	**339,012**	**334,841**

15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, այդ թվում	**372,847**	**216,507**
1. Տրված կանխավճարներ	34,589	12,127
2. Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	281,323	172,608
3. Կարճաժամկետ դեբիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	24,804	-
• Միասնական հաշիվ	24,804	-
• Դրոշմանիշային վճարների գծով	-	-
4. Դեբիտորական պարտքեր սոց. ապ.-ի գծով	-	-
5. Դեբիտորական պարտքեր աշխատավարձի գծով	13,178	13,641
6. Դեբիտորական պարտքեր առհաշիվ գումարների գծով	296	246
7. Դեբիտորական պարտքեր այլ եկամուտների գծով	18,657	17,886
Դեբիտորական պարտքերի հնարավոր կորուստների պահուստ	-	-
Զուտ առևտրային դեբիտորական պարտքեր	**372,847**	**216,507**

16. Ֆինանսական վարձակալության կամ ֆակտորինգի գծով սպասվելիք գումար

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Ֆինանսական վարձակալության կամ ֆակտորինգի գծով սպասվելիք գումար	21,494	30,860

17. Դրամական միջոցների և դրանց համարժեքներ

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Դրամարկղ	244	57
Բանկային հաշիվներ	4,528	4,392
Ընդամենը	**4,771**	**4,449**

18. Կանոնադրական (բաժնետիրական) կապիտալի զուտ գումարը

18. Հայտարարված և վճարված կանոնադրական կապիտալ

Ընկերության կանոնադրական կապիտալը մինչև 2024թ.-ի դեկտեմբեր ամիսը կազմել է 39,797 հազ. դրամ, որը կազմված է եղել 39,797 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամի: Հաշվետու տարում տեղի է ունեցել կանոնադրական կապիտալի համալրում, որի արդյունքում կանոնադրական կապիտալը կազմում է 594,796 հազ. դրամ, որը բաղկացած է 594,796 հատ սովորական բաժնետոմսերից՝ յուրաքանչյուրը 1,000 դրամի: Չվճարված բաժնետոմսեր չկան:

19. Երկարաժամկետ վարկեր և փոխառություններ

19.1 Երկարաժամկետ վարկեր

000 դրամ

	2025թ.			2024թ.		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
Մնացորդը տարեսկզբին	**1,841,860**	**1,841,860**	**-**	**1,940,352**	**1,940,352**	**-**
Ստացվել է տարվա ընթացքում	2,204,837	2,204,837	-	954,829	954,829	-
Մարվել է տարվա ընթացքում	2,054,775	2,054,775	-	1,053,321	1,053,321	-
Մնացորդը տարեվերջին	**1,991,922**	**1,991,922**	**-**	**1,841,860**	**1,841,860**	**-**

Բացահայտում

Վարկերը ստացվել են Բիբլոսբանկ ՓԲԸ-ից, 5 տարի ժամկետով, 6.5%, 11% տոկոսադրույքով:

Վարկերը ստացվել են Ինեկոբանկ ՓԲԸ-ից, 3 տարի ժամկետով, 7.5% տոկոսադրույքով:

19.2 Երկարաժամկետ փոխառություն

000 դրամ

	2025թ.			2024թ.		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
Մնացորդը տարեսկզբին	**1,752,485**	**1,756,304**	**-**	**2,367,153**	**2,381,709**	**-**
Ստացվել է տարվա ընթացքում	48,945	48,945	-	1,353,001	1,353,001	-
Մարվել է տարվա ընթացքում	118,967	122,499	-	1,967,669	1,978,406	-
Մնացորդը տարեվերջին	**1,682,462**	**1,682,749**	**-**	**1,752,485**	**1,756,304**	**-**

Բացահայտում

Փոխառությունը ստացվել է ՀՀ քաղաքացի Ալեքսանդր Սերգեյի Ուռումյանից, անտոկոս, 5 տարի ժամկետով: Փոխառությունը հաշվարկվել է արդյունավետ տոկոսադրույքով:

31.08.2020թ.-ին պահանջի իրավունքը զիջելու վերաբերյալ պայմանագրի հիման վրա Ալեքսանդր Սերգեյի Ուռումյանը ձեռք է բերել Սերգեյ Ալեքսանդրի Ուռումյանի պարտավորությունները:

Փոխառությունը ստացվել է Լաուրա Օնիկի Շահնազարյանից, անտոկոս: Պահանջի իրավունքը զիջելու վերաբերյալ պայմանագրի հիման վրա Լաուրա Օնիկի Շահնազարյանը ձեռք է բերել Ալեքսանդր Սերգեյի Ուռումյանի պարտավորությունները:

19.3 Երկարաժամկետ ֆինանսական վարձակալություն

000 դրամ

	2025թ.			2024թ.		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
Մնացորդը տարեսկզբին	**955,799**	**1,225,943**	**-**	**1,346,081**	**1,636,826**	**-**
Ստացվել է տարվա ընթացքում	378,005	421,575	-	439,951	640,234	-
Մարվել է տարվա ընթացքում	202,044	309,881	-	830,234	1,051,118	-
Մնացորդը տարեվերջին	**1,131,760**	**1,337,638**	**-**	**955,799**	**1,225,943**	**-**

Բացահայտում

Ֆին. վարձակալությունները ստացվել են բժշկական սարքավորում ձեռք բերելու համար, Ամերիաբանկ ՓԲԸ-ից, 5 տարի ժամկետով, 8% և 8.5% տոկոսադրույքներով:

Ֆին. վարձակալությունները ստացվել են բժշկական սարքավորում ձեռք բերելու համար, Ինեկոբանկ ՓԲԸ-ից, 7 և 5 տարի ժամկետով, 8%, 8.5% և 13.5% տոկոսադրույքով:

19.4 Ֆակտորինգ

000 դրամ

	2025թ.			2024թ.		
	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս	Հաշվեկշռային արժեք	Հարկային բազա	Տոկոսային ծախս
Մնացորդը տարեսկզբին	308,604	308,604	-	250,000	250,000	-
Ստացվել է տարվա ընթացքում	337,504	337,504	-	521,784	521,784	-
Մարվել է տարվա ընթացքում	431,165	431,165	-	463,180	463,180	-
Մնացորդը տարեվերջին	**214,942**	**214,942**	-	**308,604**	**308,604**	-

Բացահայտում

Ֆակտորինգը ստացվել է Արմսվիսբանկից դեղագործական ընկերությունից դեղորայք և սարքեր ստանալու համար:

20. Ակտիվներին վերաբերող շնորհներ

000 դրամ

	2025թ.	2024թ.
Մնացորդը տարեսկզբին	**145,503**	**154,207**
Շնորհի ստացում	80	-
Շնորհի ծախսում	6,353	8,704
Մնացորդը տարեվերջին	**139,231**	**145,503**

21. Կարճաժամկետ վարկեր

000 դրամ

	31.12.25թ.	31.12.24թ.
Մնացորդը տարեսկզբին	**831,926**	**631,065**
Ստացվել է տարվա ընթացքում	8,195,438	6,594,712
Մարվել է տարվա ընթացքում	7,977,912	6,393,851
Մնացորդը տարեվերջին	**1,049,452**	**831,926**

22. Կարճաժամկետ փոխառություններ

000 դրամ

	31.12.25թ.	31.12.24թ.
Մնացորդը տարեսկզբին	**65,000**	-
Ստացվել է տարվա ընթացքում	59,610	85,000
Մարվել է տարվա ընթացքում	77,610	20,000
Մնացորդը տարեվերջին	**47,000**	**65,000**

23. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր, այդ թվում	**1,812,220**	**1,681,824**
1. Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	1,172,455	1,092,449
2. Ստացված կանխավճար	17,028	25,042
3. Կարճաժամկետ կրեդիտորական պարտքեր բյուջեի գծով, այդ թվում	392,801	380,607
• *ԱԱՀ*		33,791
• *Եկամտային հարկ*	370,895	326,413
• *Բնապահպանական վճար*	-	266
• *Դրոշմանիշային վճար*	19,190	20,137
• *Պարտադիր բժշկ. ապահովագրության գծով*	2,716	-
4. Կրեդիտորական պարտքեր պարտադիր սոց.ապ.գծով	-	44,766
5. Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	228,702	137,097
6. Կրեդիտորական պարտքեր վարձակալության գծով	680	695
7. Այլ կրեդիտորական պարտքեր	554	1,167

24. Եկամուտներին վերաբերող շնորհներ

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Մնացորդը տարեսկզբին	**23,355**	**16,953**
Շնորհի ստացում	52,762	34,788
Շնորհի ծախսում	44,338	28,385
Մնացորդը տարեվերջին	**31,779**	**23,355**

25. Պահուստ

	000 դրամ	
	31.12.25թ.	**31.12.24թ.**
Պահուստ արձակուրդային վճարման գծով	**178,252**	**169,859**

26. Ֆինանսական գործիքներ

26.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի և ֆինանսական պարտավորության յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.15-ում:

26.2 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

	000 դրամ	
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Փոխառություններ	-	-
Դեբիտորական պարտքեր	313,453	204,380
Մնացորդը դրամարկղում և բանկում	4,771	4,449
Այլ ֆինանսական ակտիվներ	-	-
Ընդամենը	**318,225**	**208,829**

Ֆինանսական պարտավորություններ

	000 դրամ	
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
Վարկեր և փոխառություններ	1,049,452	831,926
Կրեդիտորական պարտքեր	1,402,392	1,230,713
Այլ ֆինանսական պարտավորություններ	-	-
Ընդամենը	**2,451,843**	**2,062,639**

Տես՝ ծանոթագրություն 3.15-ը՝ յուրաքանչյուր ֆինանսական գործիքի կատեգորիայի գծով հաշվապահական հաշվառման քաղաքականության նկարագրության համար:

27. Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Ընկերությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է պարտքային և իրացվելիության ռիսկերի:

28. Ֆինանսական ռիսկի գործոններ

28.1 Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի դիմաց երաշխիքներ չի պահանջում:

28.2 Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը վերաբերում է Ընկերության կողմից իր պարտվորությունները ժամանակին մարելուն և անմիջականորեն կապված է Ընկերության դրամական միջոցների հավաքագրման հետ, ինչը նկարագրված է վերը նշված պարտքային ռիսկերում:

29. Իրական արժեք

Ղեկավարության համոզմամբ՝ ֆինանսական հաշվետվություններում ամորտիզացված արժեքով ճանաչված ֆինանսական ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքները գրեթե հավասար են դրանց իրական արժեքին:

30. Պայմանականություններ

30.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները շարունակական բնույթ են կրում: Որպես զարգացող շուկա՝ Հայաստանում բացակայում են կատարյալ գործարար միջավայր և համապատասխան ենթակառուցվածքներ, որոնք սովորաբար գոյություն ունեն ազատ շուկայական տնտեսություն ունեցող երկրներում:

Բացի դրանից, տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել գործառնությունների ծավալները ֆինանսական շուկաներում, և ֆինանսական գործիքների իրական արժեքները կարող են չհամապատասխանել իրականացված գործարքներին: Հետագա տնտեսական զարգացման հիմնական խոչընդոտը տնտեսական և ինստիտուցիոնալ զարգացման ցածր մակարդակն է՝ զուգակցված տարածաշրջանային անկայունությամբ և կենտրոնացված տնտեսական հենքով և միջազգային տնտեսական ճգնաժամը:

Ընկերության վրա այս գործոնների հնարավոր հետևանքները կարող են ներառել բնակչությունից դեբիտորական պարտքերի ժամանակին հավաքագրումը, խաթարված հեղինակությունը, ապրանքների և ծառայությունների վաճառքի, ինչպես նաև ֆինանսական միջոցների ձեռքբերման հետ կապված դժվարությունները և այլն: Բոլոր այս խնդիրները կարող են հանգեցնել Ընկերության իրացվելիության անկման և, հետևաբար, առաջացնել անընդհատության խնդիրներ: Այնուամենայնիվ, քանի դեռ այս անորոշություններում առկա տարակուսանքներն ու ենթադրությունները շատ են, ղեկավարությունը չի կարող վստահաբար հաշվարկել, թե ինչ չափով դրանք կարող են ազդեցություն ունենալ Ընկերության ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա:

31. Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ռուսաստանի Դաշնության կողմից Ուկրաինայի նկատմամբ սկսված ռազմական գործողությունները շարունակվում են առ այսօր: Ռուսաստանի նկատմամբ միջազգային մի շարք պատժամիջոցներ շարունակում են գործել, ինչը շարունակում է ազդեցություն ունենալ Ռուսաստանի տնտեսության և ֆինանսական շուկաների վրա: Ներկայումս ռազմական գործողությունների ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետագա հետևանքները շարունակում են մնալ անորոշ:
Հաշվի առնելով ՀՀ տնտեսության և ընկերության գործունեության համար Ռուսաստանի տնտեսական և ֆինանսական միջավայրի կարևորությունը, ինչպես նաև այն, որ ՀՀ-ն Եվրասիական տնտեսական միության անդամ է, ստեղծված իրավիճակը կարող է շարունակել ազդեցություն ունենալ Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:
Ելնելով վերոնշյալ իրադարձությունների զարգացման անորոշությունից՝ Ընկերության ղեկավարությունը հնարավոր չի համարում գնահատել վերոնշյալ դեպքերի ֆինանսական հետևանքները Ընկերության հաշվետվությունների վրա:

32. Ապահովագրություն

Հայաստանում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, Հայաստանում դեռ չեն կիրառվում: Ընկերությանը, բացառությամբ տրանսպորտային միջոցների պարտադիր ապահովագրությունից, ապահովագրված չէ իր ակտիվները: Ընկերությանը՝ իր ակտիվների և գործունեության ընդհատման արդյունքում հասցված վնասի ապահովագրություն չունի: Քանի դեռ Ընկերությանը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական դրության վրա:

33. Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է՝ հաճախակի փոփոխվող օրենսդրությամբ, որը հաճախ մեկնաբանություններ է պահանջում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են առաջադրել տուգանքներ և տույժեր:

Վերոնշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ՝ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

34. Կապակցված կողմեր և գործարքներ նրանց միջև

Ընկերության կապակցված կողմերը ներառում են.

34.1 Վերահսկողության փոխահարաբերություն

Ընկերությունը մայր„դուստր, ասոցացված կազմակերպություն չունի և չի վերահսկվում (այդ թվում նշանակալից ազդեցության) այլ կազմակերպության կողմից:

Բաժնեչափի 99.8%-ը պատկանում է ՀՀ քաղաքացի Սերգեյ Ուռումյանին և մյուս 0.2% -ը քաղ. Ալեքսանդր Ուռումյանին: 08.10.2020թ.-ին տեղի է ունեցել մասնակիցների փոփոխություն, որի արդյունքում բաժնեչափի 50.001256%-ը պատկանում է Ալեքսանդր Ուռումյանին, իսկ 49.998744%-ը՝ Լաուրա Շահնազարյանին: Ընկերության մասնակիցների կողմից վերահսկվող կազմակերպություններ չկան: 31.08.2020թ.-ին պահանջի իրավունքը զիջելու վերաբերյալ պայմանագրի հիման վրա Ալեքսանդր Սերգեյի Ուռումյանը ձեռք է բերել Սերգեյ Ալեքսանդրի Ուռումյանի պարտավորությունները: Մասնակիցների հետ գործարքները ներկայացված են ստորև:

000 դրամ

Գործարքի անվանումը և ԱԱՀ	Գործարքի գումար	Գործարքի գումար	Չմարվող մնացորդ	Չմարվող մնացորդ
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Փոխառության ստացում՝	**48,945**	**1,353,001**	**1,680,750**	**1,754,304**
Ալեքսանդր Ուռումյան	34,500	277,500	1,209,914	1,249,895
Լաուրա Շահնազարյան	14,445	1,075,501	470,836	504,409
Փոխառության մարում	**74,482**	**1,978,406**	**-**	**-**
Ալեքսանդր Ուռումյան	74,482	1,399,621	-	-
Լաուրա Շահնազարյան	48,018	578,785	-	-

34.2. Ղեկավարության հատուցումները

Ընկերության կառավարչական անձնակազմին տրված հատուցումները հետևյալն են.

	2025թ.	2024թ.
Աշխատավարձ և այլ կարճաժամկետ փոխհատուցումներ	60,026	60,430

34.3 Գործարքներ այլ կապակցված կողմերի հետ

000 դրամ

Անվանումը	Գործարքի գումար	Գործարքի գումար	Չմարվող մնացորդ	Չմարվող մնացորդ
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Շորեշ ՍՊԸ				
Շորեշ ՍՊԸ-ից հումք նյութերի ձեռքբերում	4,215	-	117,535	117,234
Շորեշ ՍՊԸ-ին փոխանցված գումար՝ ձեռքբերված հումքի դիմաց	3,914	25,500	-	-
Շորեշ ՍՊԸ-ին տրված վարձակալություն	-	10	-	-
Շորեշ ՍՊԸ-ից ստացված վարձավճար	-	90		
Շորեշ ՍՊԸ-ից ստացված վարձակալություն	-	120	120	120
Շորեշ ՍՊԸ-ին փոխանցված վարձավճար	-	-	-	-
Բրոկուս ՍՊԸ				
Բրոկուս ՍՊԸ-ից ստացված ծառայություններ	36	72	1,775	1,739
Բրոկուս ՍՊԸ-ին փոխանցված գումար՝ ծառայությունների դիմաց	-	-	-	-
Բրոկուս ՍՊԸ-ին տրված վարձակալություն	360	360	890	530
Բրոկուս ՍՊԸ-ից ստացված վարձավճար	-	-	-	-
Բրոկուս ՍՊԸ-ից ստացված փոխառություն	-	-	-	-
Փոխառության մարում	-	-	-	-
Բրոկուս ՍՊԸ-ից ստացված կանխավճար	-	30,000	-	-
Կանխավճարի մարում	-	35,710	-	-